ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ԵՊԼՀ-Ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի № 11 ՆԻՍՏԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՊԼՀ-Ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

---Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի գիտական խորհրդին կից կանոնակարգերի մշակման մշտական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործունեության հիմնական նպատակն է մշակել և քննարկել գիտական խորհրդի կողմից հաստատվող կանոնադրությունների, կանոնակարգերի, կարգերի, աշխատակարգերի, ընթացակարգերի և իրավական այլ ակտերի նախագծերը:
2. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԵՊԼՀ-ի կանոնադրությանը, ներքին իրավական ակտերին և սույն աշխատակարգին համապատասխան:
3. Հանձնաժողովն իր ոլորտին վերաբերող հարցերը քննարկում է ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի և/կամ ռեկտորի հանձնարարությամբ, ինչպես նաև հանձնաժողովի անդամների առաջարկությամբ:
4. Հանձնաժողովի գործունեության ժամկետի և կազմի հաստատումը, դրանց փոփոխություններն իրականացվում են ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի կողմից:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Հանձնաժողովի գործառույթներն են.

   ա) մշակել և գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել իր աշխատակարգը,

բ) մշակել և գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել ԵՊԼՀ-ի գործունեության ոլորտներին վերաբերող կանոնակարգերի, կարգերի, ընթացակարգերի, աշխատակարգերի և իրավական այլ ակտերի նախագծեր,

գ) քննարկել և հավանության արժանացնել ԵՊԼՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների նախագծերը,

դ) գիտական խորհրդին և ռեկտորին ներկայացնել առաջարկություններ ԵՊԼՀ-ի իրավական ակտերում փոփոխություններ իրականացնելու վերաբերյալ:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության: Հանձնաժողովի նիստերը հրավիրում է հանձնաժողովի նախագահը:
7. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հանձնաժողովում որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
8. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի անդամների կողմից առաջարկվող օրակարգով:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ, ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԸ, ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ

9. Հանձնաժողովի նախագահը, փոխնախագահը և քարտուղարը ընտրվում են գիտական խորհրդի կողմից:
10. Հանձնաժողովի նախագահը՝

    ա) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը,

    բ) համակարգում է հանձնաժողովի որոշումների ընդունման գործընթացը,

    գ) առանձին հարցերի քննարկման նպատակով կարող է հրավիրել համապատասխան մասնագետների և փորձագետների,

    դ) ԵՊԼՀ-ի գիտական խորհրդում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված նախագծերը:
11. Հանձնաժողովի նախագահի տեղակալը՝

    ա) նախագահի բացակայության դեպքում իրականացնում է նրան վերապահված լիազորությունները և պարտականությունները,

    բ) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ներհամալսարանական և արտահամալսարանական շրջանակներում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված փաստաթղթերը և իրականացված աշխատանքները,

գ) ունի հանձնաժովի անդամին վերապահված իրավունքներն ու պարտականությունները:

12. Հանձնաժողովի քարտուղարը՝

ա) ապահովում է տեղեկության փոխանակումը հանձնաժողովի անդամների միջև, անհրաժեշտության դեպքում կազմում և ներկայացնում է տեղեկանք հանձնաժողովի աշխատանքների և որոշումների մասին,

բ) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ներհամալսարանական և արտահամալսարանական շրջանակներում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված փաստաթղթերը և իրականացված աշխատանքները,

գ) ունի հանձնաժովի անդամին վերապահված իրավունքներն ու պարտականությունները:

13. Հանձնաժողովի անդամը՝

ա) մասնակցում է հանձնաժողովի աշխատանքներին, բարձրացված հարցերի քննարկմանը,

բ) առաջարկներ է ներկայացնում կանոնադրությունների, կանոնակարգերի, կարգերի, աշխատակարգերի, ընթացակարգերի և իրավական այլ ակտերի նախագծերի վերաբերյալ,

գ) հանձնաժողովի քննարկումների հիման վրա անցկացված քվեարկությունների միջոցով մասնակցում է որոշումների ընդունմանը,

դ) հանձնաժողովի որոշմամբ ներհամալսարանական և արտահամալսարանական շրջանակներում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված փաստաթղթերը և իրականացված աշխատանքները:

14. Հանձնաժողովում քննարկված հարցերի վերաբերյալ հանձնաժողովի անդամը կարող է ունենալ հատուկ կարծիք և այն ներկայացնել ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի նիստում: